ՀՏԴ: 929:891.981Թեքեյան+947.925

DOI: 10.54503/0135-0536-2025.3-137

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918 – 1922 ԹԹ.)*

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանալի բառեր՝ Վահան Թեքեյան, հրապարակախոսություն, Հայաստանի առաջին Հանրապետություն, Հայկական հարց, Սփյուռք, ազգային ինքնություն, Արևմտյան Հայաստան:

Ամփոփում

Արևմտահայ, այնուհետև սփյուռքահայ նշանավոր գրող, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, հայկական լիբերալ-ժողովրդավարական քաղաքական հոսանքի վառ ներկայացուցիչ Վահան Թեքեյանի (1878–1945) հրապարակախոսությունում Հայաստանի առաջին Հանրապետության ընկալումն ու մեկնաբանությունը դիտարկվում է Հայկական հարցի և ազգային պետականության վերականգնման, ապա ինքնիշխանությունից զրկման համատեքստում: Սփյուռքահայ ինքնության և ազգային պետականության փոխհարաբերությունների շրջանակում առանձին ուշադրության է արժանանում Թեքեյանի հրապարակագրության դերը սփյուռքյան քաղաքական մշակույթի ձևավորման, ազգային օրակարգերի սահմանման և համահայկական համերաշխության վերարժևորման գործընթացներում:

Հիմք ընդունելով հրապարակախոսության սոցիալ-քաղաքական, վերլուծական գործառույթը՝ վեր է հանվում Թեքեյանի գաղափարական դիրքորոշման էվոլյուցիան՝ Հայաստանի առաջին Հանրապետության հանդեպ նախնական քննադատական վերաբերմունքից դեպի դրա ընկալումը որպես հայ ինքնության պահպանման և պետականության վերականգնման առանցքային հանգրվան:

Միևնույն ժամանակ Թեքեյանի հրապարակախոսության դիտանկյունից անդրադարձ է կատարվում արևմտահայ ու արևելահայ ինքնությունների գաղափարական բևեռացման, արևմտյան պետությունների հանդեպ հույսերի մաշման և Հայաստանի խորհրդայնացման հանդեպ հանդուրժողականության ձևավորման միտումներին: Դրանք վկայում են սփյուռքահայ քաղաքական մտածողության անցումը իդեալիզմից դեպի իրատեսություն, ինչպես նաև Սփյուռքի ու հայրենիքի միջև խառը ինքնության ձևերի կայացումը:

---

* *Ներկայացվել է 30. IV. 2025 թ., գրախոսվել է 05. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

Նախաբան

Սփյուռքահայ իրականությունում հրապարակախոսությունը տասնամյակներ շարունակ ունեցել է գաղափարական, քաղաքական և մշակութային ինքնակազմակերպման առանցքային նշանակություն: Այն ոչ միայն արձանագրել է Սփյուռքի բազմաշերտ, խառը մշակութային ինքնության փոփոխության ընթացքը, այլ նաև միաժամանակ խթանել ձևափոխումը: Սփյուռքում այն դարձել է հասարակական կյանքին մասնակցության գործիք, հանրային կարծիքի ձևավորման միջոց և ազգային ինքնության վերախմաստավորման հարթակ:

Այս իմաստով արևմտահայ, ապա նաև սփյուռքահայ նշանավոր գրող, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, հայկական լիբերալ-ժողովրդավարական քաղաքական հոսանքի վառ ներկայացուցիչ Վ. Թեքեյանի հրապարակագրական հարուստ ժառանգությունը, առանձնանալով իր ուղեգծային հստակությամբ, անհատական յուրօրինակ ոճով, չի կորցրել իր արդիականությունն ազգային ինքնության բաղադրիչների շարունակական վերագնահատման համատեքստում: Հատկապես 1918–1922 թթ. ազգային պետականության թեմատիկայով նրա հրապարակախոսությունը՝ որպես պատմաքաղաքական դրամատիկ հանգուցալուծումներին երբեմն զուսպ, երբեմն զգացմունքային արձագանքների խտացում, հետաքրքրական է հատկապես մեդիաքաղաքականություն առնչակցությունների, պետականակերտման գաղափարաբանության շուրջ բանավեճերի որակական ուսումնասիրության տեսանկյունից:

Վ. Թեքեյանի հրապարակագրությունը ազգային ինքնության և հրապարակախոսության տեսությունների առանցքում

Հրապարակախոսությունը եղել և մասամբ մնում է սփյուռքի բազմաշերտ խառը մշակութային ինքնության շարունակական փոփոխության խթանիչ: Ըստ հնդիկ ճանաչված մշակութաբան Հոմի Բհաբհայի՝ ինքնությունը ձևավորվում է «միջմշակութային սահմանային տարածքներում»[1]: Նա ընդգծում է, որ սփյուռքի կյանքը՝ որպես «տարբեր մշակույթների միջև հաղորդակցություն», ինքնությունը դարձնում է մշտապես ձևափոխվող[2], իսկ սփյուռքյան ինքնության կառուցման մտահոգում ձևավորվում է խառը և բազմավեկտոր արժեքային համակարգ:

Հայկական Սփյուռքի էթնոհոգեբանական նկարագիրը ձևավորվել է ոչ միայն Ցեղասպանության հետևանքով տեղահանության և արտագաղթի ազդեցությամբ, այլև հայրենիքի մասին պատկերացումների, հայրենիքի հետ ունեցած իրական կամ խորհրդանշական կապի դինամիկայով: Ազգային ինքնության անքակտելի մասը կազմող հայրենիքի և պետականության մտահայեցումները տարբեր ժամանակաշրջաններում ունեցել են արժեքային, էթնիկ ու քաղաքակրթական տարբեր բովանդակություն: Գերմանացի պատմաբան, սոցիոլոգ, արևելագիտության, հատկապես Հայոց ցեղասպանության և Սփյուռքի հարցերի ուսումնասիրություններով հայտնի Թեսսա Հոֆմանը, օրինակ, նշում

[1] Bhabha. 1994, 1 – 2.

[2] Bhabha. 1994, 15.

է, որ հայկական Սփյուռքի համար «Հայաստան» հասկացությունը պատմականորեն հանդես է եկել ինչպես իրավաքաղաքական, այնպես էլ բարոյա-հոգեբանական մեկնակետով[3]:

1918 թ. մայիսին Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը ինքնության վերախմաստավորման մարտահրավեր էր ինչպես արևելահայության, այնպես էլ հատկապես արևմտահայության համար, ինչը նախ դրսևորվել է սփյուռքյան հրապարակախոսությունում, ապա վերափոխվել քաղաքականության մեջ:

Հրապարակախոսությունը՝ որպես հասարակական-քաղաքական գործունեության փաստերն արտացոլող, հոգևոր արժեքների հենքին քաղաքական գաղափարներ զարգացնող[4] ստեղծագործության ուրույն տեսակ, Սփյուռքում մշտապես արժևորվել է հայապահպանական հզոր առաքելությամբ: Համեմատաբար փակ համայնքային կամ միջհամայնքային հարաբերություններում տևականորեն մնալով որպես մտավորականության և ընթերցող շրջանակների միջև երկխոսության ամենաարդյունավետ խողովակը[5] և ինտեգրված լինելով գաղափարախոսական բովանդակություն կրող քաղաքական խոսույթին[6], սփյուռքահայ հրապարակախոսությունն իրականացրել է մտավոր առաջնորդման գործառույթ:

Հրապարակախոսությունը միշտ արտահայտվում է հեղինակի անձնական աշխարհայացքային ընտրության, հեղինակային խոսքի և ներքին համոզվածության միջոցով, և, ըստ ռուս հայտնի բանաստեղծ, էսսեիստ, արձակագիր, թարգմանիչ ու հրապարակախոսության տեսաբան Ա. Պոլոնսկու, դրա հասարակական-վերափոխող դերն անբաժան կապված է նրա հասարակական-դիդակտիկ (ուսուցողական) և հասարակական-լուսավորչական գործառույթների հետ[7]: Այդ պատճառով Սփյուռքում օրինաչափորեն հրապարակախոսության մշակների դերում հանդես են եկել նաև քաղաքական, հանրային, մշակութային կյանքի առաջնորդներ, մտավորականներ:

Այս իմաստով Վ. Թեքեյանի 1918–1922 թթ. հրապարակախոսության մեջ Հայաստանի առաջին Հանրապետության և դրա ինքնիշխանության կորստի գաղափարական մեկնաբանության քննությունը հնարավորություն է տալիս վերախմաստավորել սփյուռքյան ինքնության փոխակերպումների ընթացքը և արդիականացնել պետական ինքնիշխանության պահպանման առաջնահերթության խնդիրը՝ որպես գոյաբանական հիմնահարցերի լուծման առանցք: Ելնելով դրանից՝ պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ վերլուծվել է 1918–1922 թթ. Արևելյան ու Արևմտյան Հայաստանի շուրջ ձևավորված քաղաքական իրադրությունն ու Սփյուռքի դիրքավորումը, իսկ փաստագրական վերլուծության միջոցով վեր են հանվել տարբեր ժամանակներում Վ. Թեքեյանի խմբագրած «Արև» (Ալեքսանդրիա, հրատարակվում է 1915-ից առ այսօր), «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս, 1918–1920 թթ.) և «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» (Կ. Պոլիս, 1920–1924 թթ.) թերթերում հրապարակված շուրջ հիսուն տպագիր

[3] Hofmann. 2011, 100.

[4] Горохов. 1975, 192.

[5] Кройчик. 2015, 139 – 148.

[6] Мисонжников. 2000, 95–122.

[7] Полонский. 2008, 56–61.

նյութեր: Թեքեյանի հրապարակախոսական տեքստերի գաղափարական հիմքերը դիտարկվել են բովանդակային վերլուծության մեթոդով: Առավել լայն համատեքստ ապահովելու նպատակով նրա դիրքորոշումները համադրվել են հայկական մամուլի («Ասպարէզ», «Աշխատանք», «Խորհրդային Հայաստան») այլ հրապարակագրական կամ տեղեկատվական անդրադարձների հետ: Թեքեյանի հրապարակագրական գործունեության ուսումնասիրությունն ուշագրավ է հատկապես նրա հանրային և քաղաքական դունեղ գործունեության, դրա արդյունքում ձեռք բերած մեծ հեղինակության համատեքստում: «Թէքէեանի ամբողջ կեանքը իր արտայայտութեան բոլոր ձեւերուն մէջ՝ կռիվ մը եղաւ: Պայքար՝ մահուան դէմ: Ազգին եւ հայրենիքին իսկական շահը (որուն դուք կը՛սեք գերագոյն շահ) զայն սխալ նշանակէտերու առաջնորդողներու դէմ»,– Թեքեյան գործչին այսպես է բնութագրել նրա ժամանակակից, Թեքեյանին նվիրված գրքի հեղինակ Իսահակ Ծ. Վրդ. Ղազարյանն իր հուշերում[8]:

Հայոց պետականության հռչակումը և արևմտահայ հասարակական մտքի արձագանքը Թեքեյանի հրապարակախոսության մեջ (1918–1919 թթ.)

Տարածաշրջանային ռազմաքաղաքական բարդագույն իրադրությունում 1918 թ. մայիսին Արևելյան Հայաստանի մի մասի վրա Հայաստանի Հանրապետության ձևավորումը նոր կազմավորվող Սիյուռքի ոչ դաշնակցական շրջանակների կողմից միանշանակ չընդունվեց: Պատճառը հիմնականում այն էր, որ արևմտահայությունն անվերապահ հավատում էր Առաջին համաշխարհային պատերազմից հետո Փարիզում մեկնարկած խաղաղության կոնֆերանսի արդյունքում Արևմտյան Հայաստանին անկախություն շնորհելու կամ Արևմտյան ու Արևելյան Հայաստանների միավորմամբ հայկական ընդհանուր պետության ստեղծման հնարավորությանը: Եվ ապագա Միացյալ, Անկախ Հայաստանի տեսլականում Արևմտյան Հայաստանին վերապահվում էր կենտրոնական, գերակայող կարգավիճակ՝ ելնելով այն մտայնությունից, որ հայության պատմական հայրենիքը մեծ մասամբ հենց Արևմտյան Հայաստանի տարածքին է համընկնում:

Այս տեսակետից արևմտահայությունը շուրջ 12000 կմ/ք տարածքի վրա Հայաստանի Հանրապետության ստեղծումը գնահատում էր իբրև ողորմելի «նվեր» օսմանյան իշխանությունների կողմից՝ մեկընդմիշտ փակելու համար Հայկական հարցի և իր պատմական բնօրրանում սեփական պետությունն ունենալու արևմտահայության պահանջների էջը: «Թիւրքերը այդ ատեն տասներկու հազար քիլոմեթրօ հող ճանչնալով ի նպաստ հայոց, և այն ալ ո՛չ թէ իրենց սահմաններէն, այլ երբեմնի ռուս կայսրութեան հողամասէն՝ կը կարծէին ապագայ խաղաղութեան համաժողովին կնճիռներէն մին-հայկական փշոտ հարցը – միանգամայն ընդմիշտ լուծուած ըլլալ»[9],– Եգիպտոսում լույս տեսնող «Արև»-ում գրում էր հրապարակախոս Լևոն Մկրտչյանը:

Այսպիսի հանրապետության ստեղծումը գնահատվում էր որպես Հայկական հարցի լուծմանն ավելի շատ վնասող իրողություն: Հանրապետության թերարժևորման, անկենսունակության համար ընդհուպ տնտեսական, աշխարհագրական հիմնավորումներ էին փորձում գտնել: «Ժողովուրդի ձայնը» թերթում,

---

[8] *Ղ ա զ ա ր յ ա ն. 1984, 36:*

[9] *«Արև» (Ալեքսանդրիա), 29. XI. 1918:*

օրինակ, հրապարակախոս Հայկազուն Արամյանը գրում է. «Կովկասի Հայաստանը առանձին առնելով, աշխարհագրապէս ու ազգագրապէս զուրկ է անկախ պետութիւն մը կազմելու ամէնհէական պայմաններէ: Նա միշտ բանտի մէջ պիտի մնայ: Ոչ Կասպից Ծովը և ոչ ալ Սև Ծովը կրնան զինք կշտացնել»[10]:

Անգամ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Փարիզում Հայաստանի Հանրապետության տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ, ՀՀ խորհրդարանի նախագահ և Փարիզի Հայաստանյան պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանի ներկայությամբ անդրադառնալով Ռուսահայաստանում Հանրապետության ստեղծման փաստին, այն արժևորում է միայն ապագայում Միացյալ և Անկախ Հայաստանի մաս դառնալու համատեքստում. «Որքան խանդավառութեամբ կը լցուին մեր սրտերը այն մտածման առջև թէ, մօտաւոր ապագայի մը մէջ, անիկա պիտի գայ միանալ օսմ. տիրապետութենէ ազատագրուած թրքական Հայաստանին, կազմելու համար անոր հետ Հայկ. Ամբողջական Պետութիւնը ...»[11]: Նման դիրքավորման համար հիմք էին ծառայում Փարիզի կոնֆերանսից առաջ Ազգային պատվիրակության ունեցած մարտավարական որոշ հաջողությունները: Նախ, որ Փարիզի կոնֆերանսից առաջ հայ ժողովուրդը ճանաչվել էր աշխարհամարտից տուժած ժողովուրդ, ինչը հնարավորություն էր տալիս, որպես Անտանտի հաղթած երկրների դաշնակից, ապագա հաշտության բանակցություններում հանդես գալու իր խախտված իրավունքների վերականգնման պահանջատիրող դիրքերից: Երկրորդ՝ Ազգային պատվիրակությունը կարողացել էր Փարիզի կոնֆերանսին ընդառաջ, իբրև հայ ժողովրդի շահերը ներկայացնող և նրա անունից հանդես եկող իրավաքաղաքական սուբյեկտ, օրինական ճանաչելիություն ձեռք բերել հաղթող երկրների շրջանում:

Վերջին հանգամանքը ոգևորության ալիք էր բարձրացրել աշխարհասփյուռ հայության շրջանում՝ տուրք տալով մաքսիմալիստական պահանջների: Օրինակ՝ Ֆրեզնոյում լույս տեսնող ՀՅԴ պարբերաթերթ «Ասպարեզ»-ի 1918 թ. դեկտեմբերի 27-ի խմբագրականում, Փարիզի կոնֆերանսի մեկնարկին, նշվում էր. «Մենք կը պահանջենք տաճկական և ռուսական Հայաստանները – Կիլիկիայով միասին, ինչպէս նաև Ատրպատականի նահանգի մէկ կարևոր մասը, որ պարսկական իշխանութեան ներքև կը գտնուի: ... Հայաստանը մերն է մեզի կը պատկանի, մեր տուած անհամար զոհերը այդ միայն կը հաստատեն և մենք այսուհետև զիջողութիւն պէտք չէ ցոյց տանք մեր արդար պահանջին մէջ»:

Լինելով ազդեցիկ քաղաքական գործիչ և անձամբ մտերմություն ունենալով Պողոս Նուբար փաշայի հետ, վստահելով վերջինիս հայրենասիրական մղումներին՝ Վ. Թեքեյանը ևս ի սկզբանե տոգորվել էր հենց Թրքահայաստանի առաջնորդությամբ Միացյալ Անկախ Հայաստանի ստեղծման գաղափարով: Հարցին ավելի գործնական մոտեցնելով՝ նա առաջնային էր դիտում արդեն ապագա Հայաստանի կառավարման և կառավարության ձևավորումը, թեև անձամբ իր համար այլընտրանք չկար. այդ դերը նա միանշանակ վերապահում էր Ազգային պատվիրակությանը:

Դեռ 1917 թ. ապրիլին, երբ պատերազմն ընթացքի մեջ էր, Թեքեյանն իր հոդեզավակը հանդիսացող «Արև» օրաթերթի «Ազգային կառավարութիւն»

[10] *«Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 19. IX. 1919:*
[11] *«Ժողովուրդի ձայնը», 02. V. 1919:*

խոսուն վերնագրով խմբագրականում այդ ընտրանքը հիմնավորում էր հետևյալ կերպ. «Ազգային Պատուիրակութիւնը գլուխն է այդ իշխանութեան, եւ Պատուիրակութեան հովանիին տակ գործող մարմինները՝ ներկայացուցիչները, բազուկներն են այդ իշխանութեան ...»[12]: Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո Ազգային պատվիրակությանը վերապահվող այդ կարգավիճակը, փաստորեն, դրվում էր հարցականի տակ, ապաօրինականացվում էր առնվազն Արևելյան Հայաստանի հայության անունից հանդես գալու նրա իրավունքը: Դա էր պատճառը, որ Հայաստանի Հանրապետության հռչակումը գաղթօջախների ոչ դաշնակցական և մեծամասամբ նաև ապաքաղաքական շրջանակների կողմից հավասարեցվում էր ընդհուպ ազգային դավաճանության: «Ասպարեզ»-ն այդ մթնոլորտը ներկայացնում է հետևյալ կերպ. «Երկու միլիոն կովկասահայութիւնը աննման դիւցազնամարտ մը մղած էր թրքութեթար վոհմակներու դէմ և իր անկախութեան դրօշը բարձրացուցած Մասիսի ալեհեր կատարին վրայ: Այս իրողութիւնը փոխանակ մեր սրտերը անհուն յարգանքի զգացումներով լեցնելու դէպի Կովկասահայութիւնը, ընդհակառակը առիթ տուաւ ..., որ դաւաճան հռչակեն նահատակուող հերոսները և հեռաւոր օվկիանոսներու այս ափերուն թուք ու մուր նետեն մահուան ստուերովը շառագունած անոնց մաքուր, անբիծ ճակատներուն: ... Ահարոնեանը հռչակվեց «Էնվէրի եղբայր», Խատիսեանը «թրքացած հայ մը, իսկ Դաշնակցութիւնը «դաւաճաններու վոհմակ մը»»[13]:

Ստեղծված իրավիճակը հաղթահարելու նպատակով 1918 թ. դեկտեմբերին Պողոս Նուբար փաշան հայտարարում է Փարիզում համազգային համագումար (Համազգային խորհուրդ) հրավիրելու մասին, որը պետք է մեկնարկեր 1919 թ. փետրվարի 1-ին՝ մասնակցությամբ ինչպես հայկական գաղթօջախներից, այնպես էլ Ռուսահայաստանից ընտրված պատվիրակների[14]: Նպատակն էր, Հայաստանի Հանրապետության ստեղծման և արդեն իսկ առկա կառավարության գոյության փաստի անտեսմամբ, հայության բոլոր հատվածների համաձայնությամբ ողջ ազգի անունից հանդես գալու բացարձակ իրավունքի վերապահումը Ազգային նոր պատվիրակությանը: Փաստացի Պողոս Նուբար փաշան խնդիր էր դրել Ամենայն հայոց կաթողիկոսից ստացած մանդատը փոխարինել Համազգային համագումարով, այսինքն՝ ողջ հայության կողմից ստացած մանդատով[15]: Ավելին՝ ամրապնդելու համար այս իրավունքը՝ ի հեճուկս Հայաստանի Հանրապետության և վերջինիս պետական իշխանության մարմինների գոյության, Ազգային պատվիրակությունը 1918 թ. դեկտեմբերի վերջին հռչակում է Միացյալ Հայաստանի անկախության մասին[16]: Դա նաև տակտիկական քայլ էր Փարիզի համաժողովի հիմնական դերակատարներին փաստի առջև կանգնեցնելու և այդ ինքնահռչակումը միջազգայնորեն վավերացնելու օրակարգ ձևավորելու համար:

Բուն Համազգային համագումարն իր աշխատանքներն սկսում է 1919 թ. փետրվարի 18-ին և շարունակում մինչև ապրիլի 22-ը՝ անցկացնելով 38 նիստ:

---

[12] «Արև», 02. IV. 1917:

[13] «Ասպարէզ», 04. IV. 1919:

[14] «Ժողովուրդի ձայնը», 09. I. 1919:

[15] «Ժողովուրդի ձայնը», 08. I. 1920:

[16] «Ասպարէզ», 27. XII. 1918:

Համազգային խորհրդի նիստերին դիտորդի կարգավիճակով ներկա էր նաև Փարիզի համաժողովին մասնակցելու համար Ֆրանսիայի մայրաքաղաք ուղարկված Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը[17]: Ընդ որում՝ չնայած Փարիզի խաղաղության դաշնաժողովին հայկական պահանջների հայտագրի միասնաբար մշակմանը և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Արևմտյան ու Արևելյան Հայաստաններին պատճառված վնասների միասնական չափի որոշմանը՝ Համազգային համագումարը փաստացի չի կարողանում ընդհանուր հայտարարի գալ Միացյալ Անկախ Հայաստանի ամբողջական շահերը ներկայացնող ապագա կառավարության հարցի շուրջ, որը, ըստ էության, Համազգային համագումարի հիմնական խնդիրներից էր: Արդյունքում, որպես միջանկյալ լուծում, որոշվում է ձևավորել միայն Ազգային նոր պատվիրակություն՝ կառավարության ձևավորման հարցը թողնելով հրավիրվելիք նոր համագումարին[18]:

Այդպիսով՝ Հայաստանի Հանրապետության ստեղծման և Ազգային պատվիրակության կողմից Միացյալ Անկախ Հայաստանի հռչակման, Փարիզի համաժողովին երկու հայկական պատվիրակություններով ներկայանալու, կառավարության ձևավորման հարցում համաձայնության չհանգելու և Համազգային համագումարին ՀՀ պատվիրակությանը ոչ լիարժեք ձայնի իրավունք տալու հանգամանքների հանրագումարում հայկական պահանջատիրությունը, հայեցակարգային առումով, երկատվում է: Այլևս անթաքույց է դառնում, որ ՀՀ-ի և Սփյուռքի հայության մտավորական շրջանակների մեջ պահանջատիրությունն ընկալվում է երկու փոխբացառող ելակետերից. մի կողմից՝ Միացյալ Հայաստան՝ Թրքահայաստանի հենքի վրա և Ազգային պատվիրակության իշխանությամբ, մյուս կողմից՝ Միացյալ Հայաստան՝ իրական հողի վրա գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության հենքի վրա ու վերջինիս կառավարության առաջնորդությամբ:

… 1918 թ. մայիսին Հայաստանի Հանրապետության հռչակումը և դրանից հետո սկսված պետականաստեղծման ընթացքը նախնական շրջանում աննկատ է թողնվել Վ. Թեքեյանի կողմից: Նրա խմբագրապետությամբ գործող «Արև» թերթը շուրջ մեկուկես ամիս առհասարակ որևէ անդրադարձ չի կատարել պատմական այդ իրադարձությանը: Թերթի այդ շրջանի հրապարակումներից տպավորություն է՝ կարծես չի եղել Սարդարապատի հաղթական գոյապայքարը, դրա արդյունքում ազգային պետականության վերականգնումը:

Թեքեյանն ինքն այդ շրջանում որևէ հրապարակագրությամբ չի անդրադարձել թեմատիկային: Վերջինս ուշագրավ է նաև այն տեսանկյունից, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը ձևավորվեց հայ-թուրքական պատերազմի հետևանքով կրած տարածքային ցավոտ կորուստների արդյունքում: Հանգամանք, որ կապակցվելով Ցեղասպանության աղետալի՝ հայրենազրկման հետևանքի հետ՝ տրամաբանորեն ավելի զգայուն պետք է լիներ հենց արևմտահայ մտածողության համար:

Թեքեյանի ավելի ուշ հրապարակումներում որոշակի զսպվածությամբ ի հայտ են գալիս կոնկրետ որակումներ, գնահատողական վերաբերմունքի որոշակի դրսևորումներ: Այսպես՝ 1918 թ. օգոստոսի 30-ին «Արև»-ում հրապարակված «Ազգային պատուիրակութիւնն ու իր նախագահը» խմբագրականում

[17] *«Ժողովուրդի ձայնը», 07. V. 1919:*
[18] *«Ժողովուրդի ձայնը», 02. V. 1919:*

նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը նա անվանում է «Արարատի թզուկ Հանրապետություն»:

Վերաբերմունքի որոշակի փոփոխություն է տեղի ունենում 1918 թ. վերջին, երբ Առաջին աշխարհամարտի արդյունքներով պայմանավորված՝ Հայաստանին են կցվում Արևելյան Հայաստանի՝ մինչ այդ թուրքական զորքերի կողմից գրավված տարածքները: Այս փաստից ոգևորված՝ Թեքեյանը «Արև»-ի միջոցով նույնիսկ այնպիսի միտք է դնում շրջանառության մեջ, որը տվյալ փուլում նորարարական էր: Մասնավորապես, ոգևորված Հայաստանի Հանրապետության տարածքային ընդարձակման փաստով՝ 1918 թ. դեկտեմբերին գրում է. « ... Կը մնայ մեզի աշխատիլ և պահանջել որ երէկուան Թրքահայաստանն ու Կիլիկիան միանան այս նոր պետութեան հետ ու հայկական հայրենիքին ամբողջութեամբը կազմեն միակ պետութիւն մը, ինչ որ կատարելապէս համաձայն է արդարութեան և իրաւունքի սկզբունքներուն, ինչպէս նաև արեւմուտքի ճշմարիտ քաղաքակրթութիւնը ներկայացնող Դաշնակից պետութեանց լաւ հասկցուած շահերուն»[19]: Այսինքն՝ առաջին անգամ Թեքեյանը հնչեցնում է հանրապետականակենտրոն Հայաստանի գաղափարը՝ հակադրվելով արևմտահայ տիրապետող արևմտահայաստանակենտրոնության մտայնությանը:

Մինչև 1920-ականների կեսերն այս միտքն այլևս չի հանդիպում Թեքեյանի հրապարակային խոսքում: Սակայն Թեքեյանական այս մեկնաբանությունը վկայում է, որ քաղաքական-կուսակցական նախապատվությունների ծխածածկույթի տակ ամեն դեպքում նրա համար սկզբունքայինը ոչ թե այն էր, թե Արևելյան կամ Արևմտյան Հայաստաններից որը մյուսի հանդեպ կունենա գերակայություն, որը մյուսին կկցվի, այլ ազգային միավորումն ու ազգային պետականության գոյության ապահովումը:

Եթե 1918 թ. դեկտեմբերի վերջին Փարիզում գտնվող Ազգային պատվիրակությունը չհռչակեր Միացյալ Հայաստանի և Կիլիկիայի անկախությունը[20], ապա Թեքեյանը գուցե ավելի համարձակ շարունակեր Հայաստանի Հանրապետությունը որպես Հայկական հարցի լուծման բանալի դիտարկելու հայեցակետը:

Չնայած դրան՝ Թեքեյանը բոլոր դեպքերում զերծ է մնացել Հայաստանի Հանրապետությանն առնչվող հարցերում իրեն ընորոշ քննադատական կամ դատապարտող ոճաբանությամբ հանդես գալուց՝ ակնհայտորեն փորձելով ձեռնպահ մնալ ավելորդ և, թերևս, ժամանակավրեպ կրքեր բորբոքելու և այդ կերպ օրըստօրե խորացող ներազգային օտարման ու պառակտման պրակտիկան իր հերթին խթանելուց: Թեքեյանը ոչ այնքան թիրախավորել է Հայաստանի Հանրապետությունը, որքան կենտրոնացել է պատերազմում հաղթած դաշնակից երկրների քաղաքական աջակցությամբ Միացյալ Հայաստանի ստեղծման և ճանաչման հնարավորության վրա:

Շրջադարձ Միացյալ Հայաստանի իղձից դեպի Անկախ Հայաստանի Հանրապետության արժեքայնացում

1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունեց հայտնի «Միացման ակտը», որով հայտարարվեց Արևմտյան Հայաստանը նոր ստեղծված Հանրապետությանը միավորելու մասին և իրեն հռչակեց

---

[19] *«Արև», 25. XI. 1918:*

[20] *«Արև», 30. XII. 1918:*

Միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն[21]: Այս հայտարարությունը տհաճ անակնկալ մատուցեց արևմտահայությանը և հատկապես Ազգային պատվիրակությանը՝ նոր մակարդակի տեղափոխելով վերջինիս և Հայաստանի Հանրապետության միջև քաղաքական ու գաղափարական դիմակայությունը:

Թեքեյանը, որը մինչ այդ՝ 1919 թ. ապրիլին, Փարիզի Համազգային համագումարի ընթացքում ընտրվել էր Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ ձևավորված նոր Ազգային պատվիրակության անդամ[22], անմիջականորեն ներգրավվում է Միացյալ Հայաստանի միասնական, կոալիցիոն խորհրդարան և կառավարություն ձևավորելու, ինչպես նաև վերջինիս մանդատով Փարիզում միասնական պատվիրակություն կազմելու հիմնահարցի լուծման բանակցային գործընթացում: Փարիզում հայկական երկու պատվիրակությունների միջև բանակցությունների արդյունքում էական հաջողությունների չհասնելուց հետո Թեքեյանը՝ որպես Ազգային պատվիրակության բանակցային խմբի ղեկավար, 1919 թ. այցելում է Երևան՝ ՀՀ կառավարության հետ քննարկելու այդ հարցը[23]: Բուն բանակցությունները որևէ արդյունքի չեն հանգեցնում[24]՝ արձանագրելով արևմտահայ ու արևելահայ հատվածների միջև խորապես կուսակցականացված հակասությունները հաղթահարելու անկարողությունը: Սակայն Թեքեյանը, չնայած բանակցությունների տապալման շուրջ սկսված փոխադարձ մեղադրանքներին, լինելով իրադարձությունների կիզակետում ու կրելով պատասխանատվության հսկայական չափաբաժին, մեծապես զերծ է մնացել հրապարակային վեճերի հորձանուտն ընկնելու և ակտիվ հակադարձումների գայթակղությունից: Հիմնական պատճառը, ըստ էության, այն էր, որ նա խուսափում էր հայկական երկու հատվածների միջև բանակցությունների ձախողման փաստը շահարկումների առարկա դարձնելուց՝ նախ՝ հետագայում նոր երկխոսության հնարավորության կամուրջները չայրելու նկատառումով, մյուս կողմից՝ ինքնին ամոթալի համարելով ազգային հարցերում համաձայնության չհանելու անկարողությունը հանրային քննարկման թեմա դարձնելը. « ... կը մաղթեմ, որ հայկական խնդրին լուծումը ջնջէ այս բանակցութեանց գէշ յիշատակը, մեր եւ մեզի հետ ազգին մտքէն»[25]: Իր կողմից անցկացված բանակցությունների կտրվածքով այդ զսպվածությունը Թեքեյանն ավելի կարևոր ու նպատակային էր համարում, քան ՀՀ իշխանությունների կողմից «միացման ակտի» ընդունման՝ իր կարծիքով ռազմավարական սխալի կամ երևանյան բանակցությունների ձախողման մեջ ՀՀ դաշնակցական իշխանություններին շարունակաբար մեղադրելու՝ ներքին պառակտումը սնուցող վարքագծին տուրք տալը:

Հատկանշական պետք է համարել, որ ավելի քան մեկ ամիս՝ հոկտեմբերի 13-ից մինչև նոյեմբերի 25-ը մնալով Հայաստանում՝ Թեքեյանը Հանրապետության ներքին դրության մասին լրագրողական որևէ նյութ, նոթագրություն չի

[21] «Աշխատանք» (Երևան), 03. VI. 1919:
[22] «Արև», 18. IV. 1919:
[23] Ա լ պ ո յ ա ճ ե ա ն. 1988, 247:
[24] Ա վ ա գ յ ա ն. 2018, 32:
[25] «Ժողովուրդի ձայնը», 15. I. 1920:

հրապարակել: Մարդկային ազնվությունը, թերևս, թույլ չի տվել նրան անտեսելու Հայաստանում առկա սոցիալ-տնտեսական օբյեկտիվ իրավիճակը, այդ թվում՝ արևմտահայ գաղթականության սարսափելի պայմաններն ու նրանց հարցերը լուծելու ուղղությամբ գործադրվող ջանքերը: «Ժողովուրդի ձայնը» թերթի դեկտեմբերի 21-ի համարում նա երկիմաստորեն գրում է. « ... ես այլապէս մտահոգ եմ, չըսելու համար հուսահատ եմ մէկուկես ամսուան միջոցին Երեւանի մէջ միւս բոլոր տեսածներէս՝ քան թէ միացեալ կառավարութեան ստեղծուած չըլլալէն, այդ մասին մեր կատարած աշխատանքին անյաջողութիւններէն եւ այդ առթիւ ուղղուած մեղադրանքներէն» : Չնայած հոդվածում ներհայաստանյան իրադրության քաղաքականացման որոշակի շեշտադրումներին՝ կարելի է զգալ երևանյան սոցիալական գորշ խորապատկերի վերհուշից առաջացող ներքին ճիչը զսպելու Թեքեյանի ինքնակառավարումը՝ միախառնված իրադրությունը փոխելու հնարավորության թերահավատությանը:

Նման զսպվածությունը վկայում է ազգային խնդիրներին կուսակցականի նեղ պրիզմայից դուրս, առավել լայնախոհ հայացքով նայելու հատկության մասին, որը նոր դրսևորում ստացավ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչման գործընթացի համատեքստում: Այն կարծես հարմար առիթ տվեց Թեքեյանին՝ հաղթահարելու ներքին կապանքները և արտահայտելու նորաստեղծ Հանրապետության գոյության փաստի մասին իր իրական անկեղծ զգացողությունները:

Կ. Պոլսում լույս տեսնող ռամկավար-ազատական հայացքներով «Ժողովուրդի ձայնը» 1920 թ. սկզբին խմբագրականով խանդավառությամբ գրում է. ««Ժողովուրդի ձայնը» սրտովին կողջունէ Հայաստանի անկախութեան ճանաչումը, և կը շնորհաւորէ հայ ժողովուրդը որ դարերու հալածանքէն ու տառապանքէն յետոյ վերջապէս կը տիրանայ իր նախահայրերու կառուցած հայրենիքին գէթ մէկ մասին անկախութեան: ... Ասիկա առաջին քայլն է դէպի Ամբողջական Հայաստանի կազմութիւնն և ճանաչումը»[26]:

Ռամկավարները չեն հրաժարվում Միացյալ Անկախ Հայաստանի իրենց տեսլականից: «Հայկական հարցի բուն առանցքը այն հողամասերն են, որոնք թրքական լուծին տակ կը գտնուէ՛ն: Անոնք է որ պէտք է ազատագրուին ու կազմեն Հայութեան հայրենիքը»[27], – նշվում է թերթում՝ մեկ այլ խմբագրականում բանաձևելով՝ «Հայաստանն անկախ է, բայց հայկական հարցը լուծուած չէ»[28]:

Սակայն այս ֆոնին Թեքեյանի մտածողության մեջ տեղի է ունենում էական փոփոխություն. գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունն ածանցյալից վերածվում է միացյալ պետականության վերականգնման ազգային ծրագրի հենակետային սուբյեկտի: Արդեն ընդունելի է համարվում, որ Արևելյան Հայաստանի անկախություն ձեռք բերելու իրավունքի իրացումը ոչ թե որպես Միացյալ Հայաստանի խոչընդոտ պետք է դիտարկել, այլ դրան տանող ճանապարհ կամ հնարավորություն. «Ռուսահայաստանի ազատագրումը կատարուած դէպքերու բերումով, Ռուսական կայսրութեան խորտակումով, աւելի իրաւունք

---

[26] *«Ժողովուրդի ձայնը», 14. I. 1920:*
[27] *«Ժողովուրդի ձայնը», 10. I. 1920:*
[28] *«Ժողովուրդի ձայնը», 16. I. 1920:*

ունի անկախութեան քան իր դրացիները, որոնք իրենց դատը չնոյնացուցին Դաշնակիցներու դատին հետ: Այո՛, մենք կը խոնարհինք Արարատի դրօշակին տակ, բայց Հայաստանի անկախութիւնը այն ատեն միայն իսկապէս իրագործուած պիտի ըլլայ, երբ այդ դրօշակը ծածանի նաև Տաւրոսի կատարին վրայ»[29]:

Սա մտածողական կարևոր տեղաշարժ կարելի է համարել, որը ոչ միայն ընկալ առհասարակ հետագայում Հայաստանի պետականության շուրջ թեքեյանական մոտեցումների արդիականացման հիմքում, այլ նաև նպաստեց, անկախ միջկուսակցական հարաբերություններից, Սփյուռքում Հայաստանի Հանրապետության դրական կերպարի և ինքնին պետականության վերակազմման՝ իբրև ազգային պատմական մեծագույն ձեռքբերման և արժեքի ընկալումների ձևավորմանը: Համընդհանուր այս փոխակերպման խորհրդանշական դրսևորումներն էին մամուլում 1920 թ. մայիսի 28-ը որպես անկախության վերակազման տոնի վերախմաստավորումը: «Ինչ որ ալ եղած ըլլան – մեր դառնութիւնները և յուսախաբութիւնները մեծ պատերազմին վախճանէն ի վեր, և ինչ որ ալ ըլլան տխրութիւնները զորս ապագան կը վերապահէ թերեւս մեզի, կայ և պիտի մնայ սակայն մեծապանծ գերերջանիկ իրողութիւն մը, հայկական անկախութիւնը, Հայկական – Անկախ Պետութեան մը գոյութիւնը, և ասիկա կը բաւէ որպէսզի մեղմանայ մեր ցաւը անցեալին կորուստներուն համար՝ և վստահութեամբ նայինք ապագային»,– գրում է Թեքեյանի «Արև»-ը 1920 թ. մայիսի 28-ին: Արդյունքում հետագա երկու ամիսների ընթացքում թերթը հետևողականորեն լուսաբանում է Սփյուռքի տարբեր համայնքներում՝ Վիեննայից[30], Կ. Պոլսից[31] մինչև Կալկաթա[32], Անկախության օրը տոնելուն ուղղված հանդիսությունները: Այսինքն՝ կարելի է փաստել, որ ոչ այնքան Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումն ու գոյության երկու տարիներն են Սփյուռքում արմատավորել պետականատիրության զգացումները՝ իբրև ինքնության բաղադրիչներ, որքան Հանրապետության միջազգայնորեն ճանաչումը:

Եթե նկատի ունենանք, որ այս վերարժևորումը տեղի էր ունենում Հայաստանի կառավարության և Ազգային պատվիրակության միջև ընթացող՝ կոալիցիոն կառավարություն կազմելու շուրջ բանակցությունների տապալման ֆոնին, նման ընկալումները ներազգային դրվագային միասնականության որոշակի հենապատնեշի դեր են կատարում:

Սակայն Փարիզի (1919–1920 թթ.), Լոնդոնի (1921 թ.) և Լոզանի (1922–1923 թթ.) կոնֆերանսներում Հայկական հարցի բովանդակային աստիճանական նահանջը՝ ազգային ինքնիշխան պետության ստեղծման ծրագրից դեպի փախստականների և Թուրքիայում մնացած հայերի կրոնական ու մշակութային իրավունքների պաշտպանություն, ինչպես նաև 1921 թ. քեմալաֆրանսիական համաձայնագրով Կիլիկիայի լիակատար զիջումը Թուրքիային[33], ինչն ուղեկցվեց հայության զանգվածային ելքով այդ տարածքից, արևմտահայության համար ձևավորեցին արմատապես նոր ճգնաժամային իրականություն:

[29] «Ժողովուրդի ձայնը», 10. I. 1920:
[30] «Արև», 25. VI. 1920:
[31] «Արև», 14. VI. 1920:
[32] «Արև», 21. VI. 1920:
[33] Հայկական հարց. հանրագիտարան. 1991, 146:

Նշված իրադարձություններից առաջացած հուսահատության նոր ալիքը ստիպում էր վերանայելու վերաբերմունքը եվրոպական երկրների խոստումների և, առհասարակ, Թրքահայաստանում հայկական պետականության վերականգնման հնարավորությունների, մեթոդաբանության նկատմամբ և առերեսվել իրական քաղաքականության հետ: 1922 թ. մարտին «Արև»-ի խմբագրականի հեղինակն արդեն դառնությամբ գրում է. «Վերջապէս Եւրոպան, միակը որ կը հաջողուի ներկայիս, – վար առաւ ... իտէալիսթի այն շողշողուն ու շլացուցիչ դիմակը զոր մեծ պատերազմին ատեն իր վաղնջական դէմքին անցուցեր էր լաւագոյնս խաբելու և իր կողմը քաշելու համար հին և նոր Աշխարհաց մեծագոյն ու փոքրագոյն ազգերը ...: Մեծագոյն զոհուածը – Բարիզի խորհրդաժողովին մենք՝ Հայերս եղանք, ինչպէս եղած էինք մեծագոյն զոհը պատերազմին: Ինչո՞ւ: Որովհետև, ափսո՜ս, կը ներկայացնէինք մեր բախտին անօրէն տնօրէններուն համար նուազագոյն ուժը և փոքրագոյն շահը»[34]:

Խմբագրականի նման շեշտադրումները, որոնք արտահայտում էին Խրիմյան Հայրիկի «թղթե շերեփի» գաղափարական հայեցումի նորօրյա արձանագրումները, վերահաստատում են, որ հանրային-քաղաքական միտքը շարունակում էր միջազգային քաղաքական իրողություններին զգացմունքային ընկալումներով, «չարի և բարու» բարոյաէթիկական չափումներով, «հավերժ բարեկամների և թշնամիների» գաղափարաբանությամբ մոտենալու և դրանց հիման վրա իր համար սպասելիքներ ձևավորելու, ժամանակից շուտ հաղթանակներով խանդավառվելու և դրանք չարդարանալու դեպքերում խորը անկումային տրամադրությունների մեջ թաղվելու պրակտիկան:

Նման ընկալումները ներհատուկ են ազգի ողբերգական ներկայով մտահոգ, սակայն իրավիճակի վրա ազդելու անզորությունը խորությամբ ապրող անհատին, ով, տեսնելով իրավիճակի վրա ներգործելու ազգային ներուժի պակասը, ներքին անկազմակերպվածությունն ու պառակտվածությունը, հույսը կապում է արտաքին միջավայրի անշահախնդիր բարեկամեցողության պատրանքների հետ: Նման դեպքերում ակնկալիքների չարդարացումը շատ ավելի ցավոտ է լինում հենց նույն անհատների, քան մնացածների համար: Դրա արտահայտությունն էր նաև, որ 1922 թ. Կ. Պոլսից ստիպված հեռանալուց հետո Թեքեյանը, խորքային իմաստով ընկալելով նույն եվրոպական երկրների թողտվությամբ քեմալականների կողմից Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի լիակատար գրավման փաստի առաջացրած լրջագույն բացասական ազդեցությունը Հայկական հարցի լուծման վրա, սկսում է որոշ ժամանակով հեռանալ հրապարակագրական գործունեությունից՝ փորձելով ազգային հիմնահարցերին հետամուտ լինել կրթական, գրական-ստեղծագործական, որբախնամ ակտիվ գործունեությամբ:

Խորհրդայնացումը որպես գոյաբանական ընտրություն. համակերպման հնչերանգները քաղաքական իրատեսության պայմաններում

Փարիզի, ապա Լոնդոնի (հետագայում նաև Լոզանի) կոնֆերանսների «քաղաքական գործարքներում» արևմտահայության ակնկալիքների չարդարացման փաստի հետ առերեսումը պատճառ է դառնում, որ 1920 թ. վերջերից, որպես

[34] *«Արև», 31. III. 1922:*

փրկողակ, արևմտահայ մտավորականությունը հայացքը դեպի Արևելյան Հայաստան ուղղի: Սակայն քաղաքական մտքի այդ շրջադարձը ոչ թե Հայաստանի Հանրապետության հուսադրող ապագայի հետ էր կապվում, այլ «չարյաց փոքրագույնն ընտրելու» սկզբունքով ազգային ազատագրության կամ փրկության հարցում բոլշևիկյան Ռուսաստանը քեմալական Թուրքիայից նախընտրելի համարելու: «Քէմալիսթ մուրճը ստիպեց Հայաստանը Պոլշէվիք սալին ձեւը առնել: Ասիկա ոչ ոքի համար չափազանց զարմանալի պիտի թուի: Մեզի համար՝ մաղթենք միայն որ մետաղը շատ թափթփուքներ ունեցած չըլլայ: Եթէ պահած է իր յատկութիւնները, ան կրնայ օր մը մեր ուզած ձեւը ստանալ նորէն»[35], – 1920 թ. Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդայնացման սահմանագծին նշում է «Ժողովուրդի ձայնը» թերթին փոխարինելու եկած «Ժողովրուրդի ձայնը-Ժամանակ» թերթի խմբագրականի հեղինակը: Դա է պատճառը, որ ռամկավարական մամուլը ոչ այնքան կենտրոնացավ 1920 թ. դեկտեմբերի սկզբին Հանրապետության անկախության կորստի վրա, որքան ռուսական ընտրության արդարացվածության հիմնավորման: Անկախության կորստի հարցը մամուլի էջերում սրվում էր հիմնականում հակաշնակցական քարոզչության համատեքստում՝ չեշտելով պետական ինստիտուտների, հատկապես՝ բանակի կառավարման անկարողությունը:

«... Կարսի առջեւ, սակայն, մեր բանակի բարոյական և ֆիզիքական սնանկութեան հետ, անգամ մըն ալ յայտնի եղաւ թէ կառավարութիւնն ալ սնանկ էր և պատասխանատու ներկայ ու ապագայ բոլոր ձախողութիւններուն: ... Ահա այս պայմաններուն տակ էր որ եկան կամ հրաւիրվեցան պոլշեւիքները որոնք եթէ մինչեւ այսօր ոեւէ օգուտ չունեցան, գէթ փրկեցին հայ ժողովորդը անխուսափելի վտանգէն ... »,– նշվում է «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» պարբերականի 1921 թ. հոկտեմբերի 14-ի համարում: Անկախության կորստի հարցում ռամկավարական հրապարակագրությունը, ակնհայտորեն ՀՀ դաշնակցական իշխանության և քեմալական Թուրքիայի պատասխանատվությունն ընդգծելով, նրբորեն նվազեցնում էր բոլշևիկյան Ռուսաստանի ապակառուցողականության ու ագրեսիայի նշանակությունը: Ավելին՝ բռնի բոլշևիկացումը, ըստ էության, մատուցվում է որպես գոյաբանական ընտրություն.« ... Եթէ Հայաստանի սահմաններուն վրայ պոլշեւիկներ չգտնուէին, անհրաժեշտ էր որ ստեղծուէր այդ կազմակերպութիւնը, գերութեան այդ վիճակը թեթեւցնելու համար»: Ուստի Հայաստանի խորհրդայնացումը դիտարկվել է որպես անխուսափելի և օրինաչափ երևույթ: «Հայաստանը խորհրդային է այսօր և կապուած Ռուսաստանին: Ոչ ոք կը մեղադրէ Հայաստանը իր այս քայլին համար: Հայ ժողովուրդը իր ֆիզիքական գոյութեան փրկութեան համար ուրիշ ճամբայ չունէր, քան հաշտուիլ իրականութեան հետ»[36]:

Ընդ որում՝ Հայաստանին ինքնիշխանությունից զրկելու բոլշևիկյան Ռուսաստանի ձգտումներին «բարոյական շահի» շղարշ էր հաղորդվում: Մասնավորապես 1920 թ. դեկտեմբերին «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» թերթում գրվում է.« ... Պոլշեւիզմի հայրենիքը այնչափ միամիտ չէ որ սպասէ մենէ համոզուած պոլշեւիքներ դառնալ: ... Անոր կը բաւեն Հայաստանը բնաջնջումէ

[35] *«Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», 04. XII. 1920:*
[36] *«Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», 20. XII. 1920:*

փրկուած ըլլալու բարոյական շահը՝ այսօր, և իր յետագայ ծրագրերուն համար քայլ մը յառաջ գացած ըլլալու գոհունակութիւնը»[37]:

Թեքեյանն այս շրջանում ակտիվ հրապարակագրությամբ չի զբաղվել, սակայն փորձել է Հայաստանի խորհրդայնացումն օգտագործել բոլշևիկյան Ռուսաստանի միջոցով Արևմտյան Հայաստանը փրկելու վերջին, հուսահատ նպատակի համար: Նրա ցուցումով ռամկավարական գործիչ Արտակ Դարբինյանը ժամանում է Թիֆլիս: Հանդիպելով Հայաստանի ԽՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանին՝ Դարբինյանը նրան առաջարկում է սովետական իշխանությունների օժանդակությամբ Խորհրդային Հայաստանին միացնել Սևրի պայմանագրով սահմանագծված Արևմտյան Հայաստանի տարածքները: Սակայն առաջարկը Մյասնիկյանը մերժում է այն պատճառաբանությամբ, որ Թուրքիան չի համաձայնի առանց պատերազմի որևէ տարածք զիջել, իսկ Խորհրդային Ռուսաստանը չի ցանկանա փչացնել հարաբերությունները քեմալական Թուրքիայի հետ[38]:

Այս անհույս փորձից հետո Կ. Պոլսում Թեքեյանի գործուն մասնակցությամբ Ռամկավար-Ազատական կուսակցության առաջին ընդհանուր պատգամավորական ժողովն ընդունում է հիմնարար որոշում՝ քաղաքական անվերապահ աջակցություն ցուցաբերել Հայաստանում հաստատված խորհրդային կարգերին՝ «անոր տրամադրելու համար կուսակցութեան ոյժերը հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը պահպանելու, երկրի տնտեսութիւնը վերականգնելու և հակապետական արկածախնդրութիւններ արգիլելու նպատակաւ»[39]: Սա կողմնորոշում էր, որին ինչպես ՌԱԿ-ը, այնպես էլ ողջ Սփյուռքի ոչ դաշնակցական հատվածը մնաց հավատարիմ ԽՍՀՄ-ի գոյության ողջ ընթացքում:

Ինքը՝ Թեքեյանը, Հայաստանի խորհրդայնացման անհրաժեշտության մասին հրապարակագրության ձևաչափով խոսել է շատ ավելի ուշ: «Արև»-ի 1928 թ. մայիսի 29-ի համարում հստակ բացատրելով 1920-ականների սկզբին իր պրոռուսական կողմնորոշման ռացիոնալությունը՝ նա Առաջին Հանրապետության հիմնադրման 10-ամյակի առթիվ գրված խմբագրականում պարզաբանում է. «Քանի որ բացարձակ անկախութեամբ բացարձակ վտանգի մէջ էր հոն հաւաքուած մեր մէկ միլիոնի չափ բնակչութեան կեանքը, մենք, մեր ազգին այլեւս ուժասպառ ու ճգնաժամային այս վիճակին մէջ նախընտրելով անոր կեանքը անոր անկախութեան, գոհ ենք իր ներկայ ըէժիմէն՝ որ իր գոյութեան ապահովութիւնն է այսօրուան համար ...»[40]: Իսկ 1944 թ. նոյեմբերին Հայաստանի Խորհրդայնացման 24-ամյակի առթիվ նա «Արև»-ի իր առաջնորդող հոդվածում գրում է. «Հայաստան, ուրեմն, քսանըչորս տարի առաջ՝ ... խմաստուն և փրկարար քայլ մը միայն առած եղաւ այդ օրը, որուն համար ալ պէտք է ամէն հայրենասէր Հայ մեծ օրերու յատուկ լուրջ և խոր ուրախութիւնով պարուրուի ... »[41]:

Ավելի քան ակնհայտ է, որ Թեքեյանի համար, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային առկա իրողությունների պայմաններում, ռուսական հովա-

---

[37] «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», 04. XII. 1920:
[38] Դ ա ղ ա ք յ ա ն. 2004, 37:
[39] «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», 21. VI. 1922:
[40] «Արև», 29. V. 1928:
[41] «Արև», 29. XI. 1944:

նոցի ներքո հայրենիքի մի հատվածի ֆիզիկական փրկությունը՝ պետականության որոշակի բաղադրիչների պահպանմամբ, ավելի առաջնային է դիտվել, քան Հայաստանի առաջին Հանրապետության անկախությունը ցանկացած գնով պահպանելը՝ որպես հետագայում պետականության լիարժեք վերականգնման հնարավորության նախահիմք: Պատահական չէ, որ նույն առաջնորդող հոդվածում նա գրում է. «Ապագայի բոլոր գեղեցիկ կարելիություններուն հիմն ու խարիսխը՝ ներկայ Հայաստանի գոյությունն է ...»:

Այլ կերպ ասած՝ 1918-ին Առաջին Հանրապետության գոյության պատմաքաղաքական նշանակությանն իր անհամարձակ անդրադարձներով, ավելի ուշ պետական սուվերենություն – ժողովրդի ինքնափրկություն կատեգորիաների միջև նախապատվությունների շուրջ հրապարակային մտահոսքի զարգացմամբ Թեքեյանն էական ներդրում է ունեցել հայկական իրականության մեջ պետականության գործառնական դերի վերագնահատման և այդ իմաստով քաղաքական մտածողության արմատավորման գործում:

Զսպվածության և պետականության վերագնահատումների համատեքստը

1918–1920 թթ. Հայաստանի անկախացման հարցում ավելի համարձակ և նախաձեռնողական լինելուն Թեքեյանին խանգարել է երկու հանգամանք: Առաջին՝ տարբեր երկրներում սփռված և ինքնահաստատման խնդիր լուծող արևմտահայությունը չուներ բավարար տեղեկատվություն ու պատկերացում այն պատմաքաղաքական ծանրագույն իրադրության և նախապայմանների մասին, որոնք ուղղակի ստիպեցին արևելահայ քաղաքական էլիտային գնալու Հայաստանի Հանրապետության հռչակման դժվարին որոշման կայացմանը: Դրա մասին է վկայում, օրինակ, Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի՝ Հայաստանի Հանրապետության ծագման ու զարգացման մասին աշխատության կապակցությամբ «Արև»-ում 1936 թ. մայիսի 28-ի խմբագրականում արտահայտված զարմանքն անկախության հռչակմանը նախորդած՝ Հայաստանի շուրջ տեղի ունեցած իրադարձությունների առթիվ: «« ... անկախութեան» հռչակման մանրամասնութիւնները պարզապէս կը փշաքաղէ ոեւէ հայ ընթերցող: Այնքա՜ն զարհուրելի և յուսահատական պայմաններու մէջ է, որ կատարուած է «մայիս 28-ի աքթ»ը, իբրև առաջին յայտարարութիւն Հայաստանի «անկախութեան»[42], – գրվում է խմբագրականում՝ ակամա բացահայտելով այդ առանցքային իրադարձություններից Թեքեյանի ունեցած տեղեկատվության անբավարարությունը: Դրանով կարելի է բացատրել, ինչպես ասվեց, Սարդարապատի հերոսամարտն աննկատ թողնելու, 1918 թ. մայիսյան ճակատագրական դեպքերը պատշաճ արժևորման չենթարկելու Թեքեյանի վարքագիծը: Այս առումով էական դեր է ունեցել նաև այն փաստը, որ ընդհուպ 1918 թ. Հայաստանում մամուլի կայուն համակարգ չի եղել: Այն ձևավորվել է Հանրապետության կենսագործունեությանը հընթացս:

Երկրորդ՝ արևմտահայ իրականությունում ՀՀ անկախության հռչակումն առավելապես ընկալվել է իբրև ՀՅԴ քաղաքական հավակնությունների բավարարման, իսկ ինքնիշխանության կորուստը՝ որպես հիմնականում ՀՅԴ կա-

[42] *«Արև», 28. V. 1936:*

ռավարման անկարողության դրսևորում: Դա թույլ չի տվել իրադարձությունների զարգացումը գնահատել արտաքին ու ներքին բոլոր գործոնների օբյեկտիվ համադրման միջոցով: Մասնավորապես, «Արև»-ը Առաջին Հանրապետության անկախության կորստի պատճառ է մատնանշում 1919 թ. ՀՀ կառավարության ընդունած «Միացման ակտը»՝ դա նշելով որպես քեմալականների կողմից Հայաստանը թիրախավորելու և 1920 թ. Հայաստանի դեմ պատերազմ սանձազերծելու հիմնական պատճառ: «Պետական և միջազգային ըմբռնումով աւելի խակ, տղայական և վտանգաւոր «աքթ» կարելի չէր երեւակայել: Ատիկա մարտահրաւէր մըն էր Թուրքիոյ մէջ ճըլտորուող և դաշնակիցներու դէմ ցցուող քէմալական շարժումին դէմ: ...Գիտենք թէ ի՛նչ հետեւանք ունեցաւ այդ անխորհուրդ «աքթը»: Թուրքերը յարձակեցան Հայաստանի վրայ՝ տարին չլրացած, գրաւեցին 1914ի սահմաններուն մէջ կազմուած Հայաստանի կէսը ...»[43]: Թերթում, սակայն, անդրադարձ չկա, օրինակ, Հարավային Կովկասում բոլշևիկյան ներկայության ակտիվացման հետևանքով ուժային հավասարակշռության խախտման, բոլշևիկների կողմից իրականացված կազմաքանդող քարոզչական գործունեության, Հայաստանում բնակվող մահմեդական տարրերի ջատող ապստամբական գործունեության ազդեցության մասին:

Սակայն «Արև»-ում հետագայում Թեքեյանը վերարժևորել է անկախ պետականության ձեռքբերումը պատմական հեռանկարի համատեքստում: 1928 թ., այսինքն՝ անկախության հռչակումից 10 տարի անց, անդրադառնալով մայիսի 28-ի խորհրդին, թերթում խմբագիրը կատարում է կարևոր արձանագրում. «Տօնած ենք և կը տօնենք Մայիս 28ը, իբրեւ դարեր վերջ առաջին անգամ հայ երկրամասի մը վրայ ծագող ազատութեան նշոյլը՝ որ բաւական ուժով չէր տեւելու համար, և մեր ժողովուրդն, իր վարիչ կուսակցութիւնով, բաւական խելացի չէր զայն պահպանելու համար: Մենք զայն կը տօնենք համեստօրէն, իբրեւ պատմական իրողութիւն մը, այո՛, ուրախութեամբ մը որուն մէջ շատ ալ տխրութիւն կը մտնէ, և տխրութիւնը աւելի կենդանի է՝ դժբախտաբար՝ քան ուրախութիւնը»[44]:

Թեքեյանի խմբագրած թերթերը, ինչպես Հայաստանի անկախության, այնպես էլ հատկապես Հայաստանի խորհրդայնացումից հետո մշտապես ուշադրության կենտրոնում են պահել երկրի սոցիալ-տնտեսական կյանքը՝ դրանց անդրադառնալով թեմատիկ խորագրերի ներքո: Բուն անկախության տարիներին տեղեկատվության հիմնական աղբյուր էին հանդիսանում հայրենական մամուլից հիմնականում ժողովրդական կուսակցության «Ժողովուրդ» թերթը, ավելի ուշ՝ հայաստանյան ռամկավարական օրգան «Հայաստանի ձայնը», ինչպես նաև արտերկրյա լրատվական օրգաններ, ինչպես օրինակ, “The Asiatic Review”*-ն կամ* “Reuters”*-ը: Ձեռքը դրած Հայաստանի զարկերակին՝ Թեքեյանական խմբագրությամբ լրատվաքարոզչական օրգանների հիմնական առաքելությունը, բացի զուտ վիրավոր հայրենիքից աշխարհասփյուռ հայրենակիցներին տեղեկատվության մատակարարումը, նաև երկրին օժանդակության ցուցաբերումն էր՝ համայնքներում հանգանակությունների խթանման, երբեմն*

---

[43] *«Արև», 28. V. 1936:*

[44] *«Արև», 29. V. 1928:*

նաև կազմակերպման միջոցով: Վառ օրինակը այն հզոր տեղեկատվական արշավն էր, որ թերթում 1920 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին իրականացվեց Հայաստանի կառավարության կողմից Սիյուռքում մեկնարկած 20 մլն դոլարի փոխառության ծրագրին (թերթն այն համարից համար գլխագրում էր որպես «Անկախության փոխառության» ծրագիր) զովազդային ու տեղեկատվական լայն աջակցություն ցուցաբերելով[45]: Առանձնակի խանդաղատանքով լուսաբանվում էր այդ նպատակով Ալեքսանդր Խատիսյանի շրջայցը հայկական համայնքներով, և դա հայրենանվիրումի ուրույն, ինքնաբուխ ու անկեղծ դրսևորում էր:

Եզրակացություն

Վահան Թեքեյանի 1918–1922 թվականների հրապարակախոսությունը սիյուռքահայ ինքնության քաղաքական վերարտադրության համատեքստում հայկական պետականության վերականգնման, ինքնիշխանության ընկալումների սինթեզումն է, որն արտացոլում է արևմտահայության և Սիյուռքի ներսում գոյություն ունեցող գաղափարական բևեռացումները:

Սկզբնապես քննադատաբար տրամադրված լինելով Հայաստանի առաջին Հանրապետության նկատմամբ՝ Թեքեյանը հետագայում աստիճանաբար անցում է կատարում առավել ընդգրկուն, հայաստանակենտրոն միավորող ընկալման՝ դրան մոտենալով որպես Հայկական հարցի լուծման բանալու:

Մինչև 1920 թ. Հայաստանի միջազգային ճանաչման գործընթացի մեկնարկն ընկած ժամանակահատվածում Թեքեյանի մասամբ հրապարակագրական, մասամբ քաղաքական գործունեությունն ընդգծում է սիյուռքահայ քաղաքական մտքի և մայր հայրենիքի իշխանությունների միջև գոյություն ունեցած փոխհասկացվածության ճգնաժամը, որն իր կիզակետին է հասնում հատկապես արևմտահայաստանակենտրոն և արևելահայաստանակենտրոն միացյալ պետության տեսլականների բախման համատեքստում:

Թեքեյանի հրապարակախոսությունը սրում է պետականության գաղափարի շուրջ ազգային համերաշխության հիմնահարցը, ինչն արժևորվում է հատկապես քաղաքական բևեռացման առավել սուր պահերին նրա դրսևորած զուսպ ու հավասարակշռված վարքաբանությամբ:

Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդայնացումը Թեքեյանն անցկացնում է ոչ այնքան ինքնիշխանությունից զրկման, որքան որպես հայաբնակ աշխարհագրական տարածքի և հայրենիքի փրկության հարկադրված պատմական ընտրության ոսպնյակով:

Սիյուռքահայության իդեալիստական սպասումների աստիճանական փոխակերպումը դեպի զգայուն քաղաքական իրատեսություն, Թեքեյանի հրապարակախոսության մեջ ստանալով հեղինակային ինքնատիպ ձևակերպում ու իմաստավորում, հանգեցնում է Արևելյան Հայաստանի և խորհրդային իշխանության նկատմամբ հարմարվողական վերաբերմունքի ձևավորմանը՝ որպես ազգային ինքնության պահպանման և հետագայում ինքնիշխան պետականության վերականգնման էական հնարավորության:

[45] *«Արև», 06. IX. 1920:*

Գոռ Աբրահամյան – բ. գ. թ., դոցենտ, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մեդիառուսումնասիրությունների ու նշանագիտության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայ մամուլի պատմություն, սփյուռքահայ հրապարակախոսություն, հանրային հաղորդակցություն, նոր մեդիայի հիմնահարցեր, ժուռնալիստիկայի տեսություն: Հեղինակ է 2 ուսումնական ձեռնարկի և 5 հոդվածի: ORCID:0009-0009-8367-4257. gor.abrahamyan@ysu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազգային համագումարի նոր նստաշրջանը պէտք է շարունակէ նախորդին գործը. – «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 08. I. 1920:

Ալպոյաճեան Ա. 1988, Վահան Թեքէեան, իբր հանրային մարդ և հրապարակագիր, Բեյրութ, Թէքէեան Մշակութային Միութեան հրատարակութիւն, 400 էջ:

Այսօրուան տօնը . – «Արև» (Ալեքսանդրիա), 28. V. 1920:

Ավագյան Ա. 2018, Վահան Թեքեյան. ազնվական քերթողը, Երևան, ԵՊՀ հրատ., 215 էջ:

Արամեան Հ. Կիլիկիան պիտի ըլլայ Հայաստանի ծանրութեան կեդրոնը. – «Ժողովուրդի ձայնը» (Կ.Պոլիս), 19. IX. 1919:

Արարատի անկախ հանրապետութիւնը. – «Արև» (Ալեքսանդրիա), 29. XI. 1918:

Արարատի դրօշակը պետք է ծածանի նաեւ Տաւրոսի կատարին. – «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 10. I. 1920:

Արձանագրուեցեք անկախութեան փոխառութեան. – «Արև» (Ալեքսանդրիա), 06. IX. 1920:

Բարիզի հայկական համագումարը. – «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 09. I. 1919:

Դալլաքյան Կ. 2004, Վահան Թեքեյան. քաղաքական-հասարակական գործիչը. – Հայոց պատմության հարցեր. գիտական հոդվածների ժողովածու, հ. 14, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 35–45:

Դիմակը վար առնուած. – «Արև» (Ալեքսանդրիա), 31. III. 1922:

Դշխոյեան Ն. Դեռ երես ալ ունին. — «Ժողովուրդի ձայնը–Ժամանակ» (Կ. Պոլիս), 14. X. 1921:

Թեքեեան Վ. Ազգային կառավարութիւն. – «Արև» (Ալեքսանդրիա), 02. IV. 1917:

Թեքեեան Վ. Ազգային պատուիրակութիւնն ու իր նախագահը. – «Արև» (Ալեքսանդրիա), 30. VIII. 1918:

Թեքեեան Վ. Յոյսի եւ յուսալքման պատճառներ. – «Արև» (Ալեքսանդրիա), 25. XI. 1918:

Թեքեեան Վ. Երեւանի բանակցութիւնները Ազգային պատուիրակութեան եւ հայ հանր. կառավարութեան միջեւ. – «Ժողովուրդի ձայնը» (Կ.Պոլիս), 21. XII. 1919:

Թեքեեան Վ. Բացատրութիւն մը Երեւանի բանակութիւններուն վրայ. ինչ ուզեցինք, ինչ ստացանք. – «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 15. I. 1920:

Ինչ վիճակի մէջ է Հայաստանի խնդիրը Բարիզի համագումարին շուրջը. տեսակցութիւն մը պուլկարահայ պատուիրակ պ. Հինդլեանի հետ. – «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 02. V. 1919:

Ինչու դուրս եկանք միութիւնէն. – «Ասպարէզ» (Ֆրեզնո), 04. IV. 1919:

Խորհրդային Հայաստանի 24-րդ տարեդարձը. – «Արև» (Ալեքսանդրիա), 29. XI. 1944:

Կիլիկիա պիտի ըլլայ Հայաստանի ծանրութեան կենդրոնը. – «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 19. IX. 1919:

Հակոբեան Յովի. Հայկական դատի ճգնաժամի օրերուն. մեր դիրքը Խորհրդային Հայաստանի հանդէպ. – «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» (Կ. Պոլիս), 20. XII. 1920:

Հայ ազգային համագումարի աշխատութիւններու եւ որոշումներու ամփոփումը. (պաշտօնական զեկույց). – «Ժողովուրդի ձայնը» (Կ.Պոլիս), 07. V. 1919:

Հայաստանը սալին և մուրճին մէջտեղ. – «Ժողովուրդի ձայնը–Ժամանակ» (Կ. Պոլիս), 04. XII. 1920:

Հայաստանի անկախութեան բ տարեդարձը Պօլսոյ մէջ. – «Արև» (Ալեքսանդրիա), 14. VI.1920:

Հայաստանի անկախութիւնը հռչակուած. – «Ասպարէզ» (Ֆրեզնո), 27. XII. 1918:

Հայաստանի անկախութիւնը հռչակուած. հեռագիր վսեմ. Պողոս Նուպար փաշայէ, ժողովուրդին խանդավառութիւնը. – «Արև» (Ալեքսանդրիա), 30. XII. 1918:

Հայաստանի անկախութիւնը պաշտօնապէս ճանչցուցուած. – «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 14. I. 1920:

Հայաստանն անկախ է, բայց Հայկական հարցը լուծուած չէ. – «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 16. I. 1920:

Հայկ. անկախութեան տարեդարձը Կալկաթայի մէջ. – «Արև» (Ալեքսանդրիա), 21. VI. 1920:

Հայկական հանրապետութեան տարեդարձը Բարիզի մէջ. – «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), 02. V. 1919:

Հայկական հարց. հանրագիտարան. 1991, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 348 էջ:

Ղազարյան Ի. Ծ. Վրդ. 1984, Վահան Թէքէեան, Լոս Անջելես, G. Printing, 138 էջ:

Մայիսի 28. տարեդարձ անկախութեան. – «Արև» (Ալեքսանդրիա), 29. V. 1928:

Մայիսի 28-ի մասին. – «Արև» (Ալեքսանդրիա), 28. V. 1936:

Մեծ հանդէս Վիէննայի մէջ Հայաստանի ազատութեան առթիւ. – «Արև» (Ալեքսանդրիա), 25. VI. 1920:

Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտ. – «Աշխատանք» (Երևան), 03. VI. 1919:

Նոր ազգային պատուիրակութիւնը. – «Արև» (Ալեքսանդրիա), 18. IV. 1919:

Ռամկավար ազատական կուսակցութեան կիրակիւ հաւաքոյթին շուրջ. – «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» (Կ. Պոլիս), 21. VI. 1922:

Վերջին լուրը. – «Ասպարէզ» (Ֆրեզնո), 27. XII. 1918:

Bhabha H. K. 1994, The Location of Culture. London, Pub. House “Routledge”, 285 p.

Hofmann T. 2011, One nation – three subethnic groups. The case of Armenia and her Diaspora. Yerevan, Pub. House “Narek”, 106 p.

Горохов В. М. 1975, Закономерности публицистического творчества (пресса и публицистика). Москва, изд. «Мысль», 190 с.

Кройчик Л. Е. 2015, Диалоговые ресурсы публицистики. – «Вопросы теории и практики журналистики», Иркутск, т. 4, № 2, изд. «БГУ», с. 139–148.

Мисонжников Б. Я. 2000, Отражение действительности в тексте. – В кн.: Основы творческой деятельности журналиста. С. Петербург, изд. «Знание», с. 95–122.

Полонский А. В. 2008. Публицистика как особый вид творческой деятельности. – «Научные ведомости Белгородского государственного университета», № 11, с. 56–61.

ПЕРВАЯ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ И ПРОБЛЕМА ПОТЕРИ НЕЗАВИСИМОСТИ В ПУБЛИЦИСТИКЕ ВАГАНА ТЕКЕЯНА (1918–1922 ГГ.)

ГОР АБРАМЯН

Резюме

Ключевые слова: Ваган Текеян, публицистика, Первая Республика Армения, Армянский вопрос, Диаспора, национальная идентичность, Западная Армения.

Восприятие и интерпретация Первой Республики Армения в публицистике известного западноармянского, а затем диаспорального писателя, публициста, общественно-политического деятеля, яркого представителя армянского либерально-демократического политического течения Вагана Текеяна (1878–1945 гг.) рассматриваются в контексте Армянского вопроса, восстановления национальной государственности, а затем – утраты суверенитета. В рамках отношений между идентичностью армянской диаспоры и национальной государственностью особое внимание уделяется роли публицистики Текеяна в формировании политической культуры Диаспоры, определении национальных повесток, а также переоценке идеи всеармянской солидарности.

Исходя из социально-политической аналитической функции публицистики, выявляется эволюция идеологических позиций Текеяна – от первоначального критического отношения к Первой Республике Армения до признания её в качестве ключевого этапа в сохранении армянской идентичности и восстановлении государственности.

Сквозь призму публицистической точки зрения Текеяна также рассматриваются идеологическая поляризация западноармянской и восточноармянской идентичностей, утрата надежд на западные державы и формирование относительно лояльного отношения к советизации Армении. Эти тенденции свидетельствуют о развитии политической мысли Армянской диаспоры от идеализма к реализму, а также о становлении гибридных форм идентичности между Диаспорой и Родиной.

Гор Абраамян – к. филол. н., доцент, преподаватель кафедры медиаисследований и семиотики факультета журналистики ЕГУ. Научные интересы: история армянской прессы, армяно-диаспоральная публицистика, массовые коммуникации, проблемы новых медиа, теория журналистики. Автор двух учебных пособий и пяти статей.
ORCID:0009-0009-8367-4257. gor.abrahamyan@ysu.am

THE FIRST REPUBLIC OF ARMENIA AND THE ISSUE OF THE LOSS OF INDEPENDENCE IN THE PUBLICISTIC WRITINGS OF VAHAN TEKEYAN (1918–1922)

GOR ABRAHAMYAN

Summary

Keywords: Vahan Tekeyan, publicistic writings, the First Republic of Armenia, Armenian Question, Diaspora, national identity, Western Armenia.

The perception and interpretation of the First Republic of Armenia in the publicistic writings of Vahan Tekeyan (1878–1945), an outstanding Western Armenian and later Diaspora writer, publicist, socio-political figure, and a prominent representative of the Armenian liberal-democratic political movement, are examined in the context of the Armenian Question, the restoration of national statehood, and subsequently the loss of sovereignty. Within the framework of the relationship between the identity of the Armenian Diaspora and national statehood, particular attention is given to the role of Tekeyan's publicistic writings in shaping the political culture of the Diaspora, defining national agendas, and re-evaluating the concept of pan-Armenian solidarity.

Based on the socio-political analytical function of public discourse, the evolution of Tekeyan's ideological stance is revealed – from an initial critical attitude to the First Republic of Armenia to its recognition as a pivotal stage in preserving Armenian identity and restoring statehood.

From Tekeyan's perspective, attention is also drawn to the ideological polarization between Western and Eastern Armenian identities, the gradual erosion of hope in Western powers, and the development of a relatively loyal attitude toward the sovietization of Armenia. These trends reflect a shift in political thought of the Armenian Diaspora from idealism to realism, as well as the emergence of hybrid identity formations between the Diaspora and Homeland.

Gor Abrahamyan – Candidate of Philological Sciences, Associate Professor, Lecturer at the Department of Media Studies and Semiotics, Faculty of Journalism, Yerevan State University. Scientific interests: history of the Armenian press, publicism in Armenian and Diaspora, mass communications, issues of new media, theory of journalism. Author of two textbooks and five articles. ORCID:0009-0009-8367-4257. gor.abrahamyan@ysu.am

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 3